ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«13» 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000109

Ձեռնարկողը՝ ***«Հայաստանի մանուկներ» Բարեգործական հիմնադրամ***
ք. Երևան, Հյուսիսային պող. 1, 8-րդ հարկ, 24 սենյակ

Գործունեությունը՝ ***Դեբեդ համայնքի վարչական տարածքում «Քոաֆ սմարթ» համագումարների կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարզյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 002109

<<13>> 11 2020թ.

Լոռու մարզի Դեբեդ համայնքի վարչական տարածքում <<Քոաֆ սմարթ>> համագումարների կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Լոռու մարզ, Դեբետ համայնք, Դեբետ 1-ին փ. 31/17 հողամաս հողամաս

Կենտրոնը նախատեսված է կառուցել Լոռու մարզի Դեբետ համայնքի Դեբետ 1-ին փողոցի 31/17 հասցեում:

Նախագծված համագումարների կենտրոնը տեղակայվելու է «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին պատկանող ընդհանուր 3.84236հա տարածքում և զբաղեցնելու է 1970մ^2 մակերես, որի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի է, գործառնականը՝ հասարակական կառուցապատման:

Ռելիեֆի բարձրության բացարձակ նիշերը տատանվում են 1025-1034 մետրի սահմաններում: Շենքերի հիմքերի տակ որպես հիմնատակի գրունտներ ծառայում են՝ խճա-մանրախճային գրունտները՝ տեղ-տեղ մեծաբեկորներով, լիցքային գրունտներով և բազալտներով: «ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» համագումարների կենտրոնը նախագծվել է ռելիեֆին համահունչ: Այն բնությանը և լանդշաֆտին ներդաշնակ, միահարկ, կանաչ տանիքով կառույց է:

Նկարագրական մաս. Համագումարների կենտրոնի կառուցման համար տրամադրվող հողամասն ազատ է շենք շինություններից և ծառաթփուտային բուսականությունից: Այն հարթ, փոքր թեքությամբ տարածք է: Կառուցապատման ենթակա մակերեսը կազմելու է 1970.0մ^2:

Համաձայն ՍՄԱՐԹ համագումարների կենտրոնի նախագծի կենտրոնը ներառում է՝ 20 հյուրանոցային համարներ, 2 հատ միջազգային չափանիշներին համապատասխան կոնֆերանս սենյակներ /ամբողջովին տեխնիկապես հագեցված/, սրճարան, մասնագիտացված խոհանոց, ժամանցի և հանդիսությունների սենյակներ:

Համաձայն կառուցապատման նախագծի նախատեսվել են նաև բացօթյա կայանատեղիներ: Կառույցի համար նախատեսված է կանաչապատ տանիք: Տարածքից

մակերևութային ջրերի հեռացումը կիրականցվի ինքնահոս եղանակով, գոյություն ունեցող բնական թեքություններով և կուղղվի դեպի կանաչապատ գոտիներ:

Համագումարների կենտրոնի արտաքին ինժեներական ցանցերի նախագծերը /ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում/ մշակվել են համաձայն ծառայությունները մատուցող կազմակերպությունների տրամադրած նախնական տեխնիկական պայմանների:

Շինարարական աշխատանքները նորմատիվներով հաշվարկված են 2.5 տարի, կամ 30 ամիս, այդ թվում՝ 3 ամիս նախապատրաստական փուլ, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ունիվերսալ էքսկավատոր, ավտոբետոնախառնիչ, ավտոամբարձիչ, բետոնամուղ պոմպ, բետոնախառնիչ, ավտոինքնաթափ և այլն: Շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդի մատակարարումը կիրականացվի ավտոբետոնախառնիչներով:

Համաձայն նախնական գնահատման հայտի շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են կենցաղային թափոններ (օրական մինչև 3կգ) և շինարարական թափոններ՝ աղբի (250մ^3) տեսքով: Շինարարական աղբը պարբերաբար տեղափոխվելու և տեղադրվելու են Դեբետ համայնքապետարանի հետ համաձայնեցված թափոնավայր: Գործունեության ընթացքում կենցաղային աղբը կհավաքվի կենցաղային աղբի համար նախատեսված աղբամաններում և կանոնավոր կերպով կհեռացվի շինարարական հրապարակից:

Աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հողի (գրունտի) ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար:

Շինարարական աշխատանքների ընթացքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում, բացի այդ աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի տարածքից հնարավոր արտահոսքերը և արտանետումները:

Տարածքի մակերևութային ջրերի հեռացումը նախատեսվում է կատարել կազմակերպված եղանակով՝ հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով: Տարածքի ցածրադիր տեղերում տեղադրվելու են անձրևընդունիչ հորեր, որտեղից տեխնիկական պայմանի համաձայն անձրևաջրերը հեռացվելով տարածքից միացվելու են գործող հեղեղատար ցանցին:

Շինհրապարակի կազմակերպման աշխատանքները կիրականացվեն բացառապես կառուցապատվող տարածքի ներսում կազմակերպված շինարարական հրապարակում, բնապահպանական միջոցառումների ծրագրում ներկայացված պլանին համաձայն: Մասնավորապես, պլանում հաշվի են առնված շինանյութերի ժամանակավոր պահեստավորման և թափոնների կուտակման ժամանակավոր վայրերը, շինարարական տեխնիկայի կայանատեղիները, աշխատողների և բանվորական կազմի սանիտարա հիգիենիկ պայմանները (ընդմիջման և հանգստի հարմարություններ, խմելու և կենցաղային կարիքների ջուր, զուգարան, աշղեկի աշխատասենյակ) և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 6700մ^3 ծավալով հողային զանգված, որից 2300մ^3-ը՝ հետլիցքի համար օգտագործելու նպատակով: Մնացած գրունտի 4400մ^3 ծավալը Դեբետի համայնքապետարանի հետ համաձայնեցված կտեղափոխվի հատկացված թափոնավայր կամ կօգտագործվի համայնքային ճանապարհների բարեկարգման համար:

ՀՀ ԲՆՕՍՏՈՒՆ ՍՊԱՍԱՐԿՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ENVIRONMENTAL IMPACT ASSESSMENT EXPERTISE CENTER
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
02543163
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարական աշխատանքներից կառաջանա բուսահող, որը ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան կպահեստավորվի: Շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:

Կանաչապատման մակերեսը կկազմի հողամասի 80 տոկոսը 3.074հա, իսկ 20 տոկոսը կկազմի կառուցապատումը, ներառյալ՝ սալվածքները և կենտրոնի սպասարկման տարածքները: Կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի և ծաղիկների տեսքով աշխատանքներ և ծառատունկ: Նշված աշխատանքներն իրականացնելու համար տարածքի համար կմշակվի կանաչապատման նախագիծ: Ծառատեսկները կնախատեսվեն տարածքի բնակլիմայանկան պայմաններին և լանդշաֆտին համապատասխան: Ծառերի կպչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում, որի իրականացման պատասխանատուն հանդիսանում է կառուցապատողը՝ «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը:

Կանաչապատվող տարածքների ոռոգումն իրականացվելու է տարածքի համար նախագծվող ոռոգման ցանցի միջոցով: Ոռոգման նպատակով կօգտագործվի նաև մաքրման կայանում մաքրված հոսքաջրերը:

Գործունեության իրականացման տեղանքին հարակից տարածքներում հատուկ պահպանվող տարածքներ չկան, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի և արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

Նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան և օգտագործել փոշու պաշտպանիչ ցանցեր,
- սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրության թաղանթով կամ հատուկ ցանցերով՝ փոշու տարածումը կանխարգելելու համար,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում և կարգաբերում,
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով,
- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, ինչը ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային նյութ վերաօգտագործելով շինարարական այլ աշխատանքներում կամ հանձնելով վերամշակող կազմակերպություններին,
- մեքենա-սարքավորումների լիզքավորումը, քսայուղերի փոխումը կամ նմանատիպ այլ գործողություններն իրականացնել մասնագիտացված կենտրոններում, որպեսզի հնարավորինս բացառվի շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և հնարավոր ռիսկերը,

- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Դեբետի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից,
- բացառել շինհրապարակում թափոնների ժամանակավոր կուտակումները,
- վտանգավոր թափոնների հանձնումն իրականացնել այն ընկերությունների հետ, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման կամ տեղակայման արտոնագիր,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը,
- շինանյութերի ձեռք բերումն իրականացնել միայն լիցենզավորված մատակարարներից:

Հողի բերրի շերտի պահպանման ծախսերը գնահատվել են 1200.000 ՀՀ դրամ: Կանաչապատման աշխատանքերի իրականացման ծախսերը նախնական գնահատվել են 3մլն 500 հազար դրամ: Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ /կազմում են նախագծային աշխատանքների արժեքի մոտ 1,2%/ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

Պատճառաբանական մաս

Համաձայն նախնական հայտի, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին և չի խոչնդոտելու շրջակա բնակչության վիզուալ տեսադաշտը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, ինչպես նաև Առողջապահության նախարարությունն ու Լոռու մարզպետարանը, Քաղաքաշինության կոմիտեն, Արտակարգ իրավիճակների նախարարությունը, Պաշտպանության նախարարությունը: Հայտի լրամշակման ընթացքում հաշվի են առնվել նաև տրված դիտողություններն ու առաջարկությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Քոաֆ Սմարթ համագումարների շենքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով աղմուկի մակարդակը և ճանապարհների բեռնվածությունը:
3. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում և շահագործումից հետո պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և կանոնները: Նախատեսել հակահրդեհային վահանակ և կրակմարիչներ:
4. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համաձայնեցված:
6. Բացառել անորակ վառելիքի օգտագործումը:
7. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական նորմերը և կանոնները:
8. Կանաչապատման աշխատանքները իրականացնել մասնագետի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն(բնակլիմայանկան պայմաններին և լանդշաֆտին համապատասխան):

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից ներկայացված՝ Լոռու մարզի Դեբեդ համայնքի վարչական տարածքում «Քոաֆ սմարթ» համագումարների կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ.Գևորգյան

Փորձագետ՝ Վ. Ռաիսյան